ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 126-Ա/3 «09» օգոստոսի 2024թ.

«ԳՈՌ-ՄԱՆ» ՍՊԸ- ԻՆ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2–րդ մասով և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա/ ենթակետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաշվի առնելով «ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-24/59» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի օգոստոսի 7-ի որոշումը առ այն, որ «Գոռ-Ման» ՍՊԸ-ի փոխկապակցված անձինք («Մաշխ» ՍՊԸ-ն՝ 25.11.2023 - 25.11.2025թթ. ժամանակահատվածով և «ԱվգոմեՇին» ՍՊԸ-ն՝ 12.04.2024-12.04.2026թթ. ժամանակահատվածով) գտնվում են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում և այն, որ «Գոռ-Ման» ՍՊԸ-ն ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-24/59 ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2.3 կետի համաձայն Հավելված 1 Դիմում-հայտարարությամբ հայտարարել և հավաստել է, որ իր հետ փոխկապակցված անձինք բավարարում են հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, ուստի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության և 19-րդ ենթակետի պահանջների համաձայն՝ «Գոռ-Ման» ՍՊԸ-ի գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես

իրականությանը չհամապատասխանող և այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6,-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակմանը.

«ԳՈՌ-ՄԱՆ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 08430516, գործունեության հասցեն՝ Ք. Գավառ Գ. Միքայելյան 69) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Recoverable Signature

X

ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Signed by: HAKOBYAN HASMIK 5610800161 **Հ. ՀԱԿՈԲՅԱՆ**